

Մարգային միջոցառումներ՝ նվիրված մայիսյան հաղթանակներին

10.05.2016

Լոռու մարզի բոլոր քաղաքային ու գյուղական համայնքներում հանդիսավորությամբ ու շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 71-ամյակը և Շուշիի ազատագրման 24-րդ տարեդարձը: Ամենուր տեղի ունեցան մայիսյան եռատոներին նվիրված բազմաբնույթ միջոցառումներ, մեծարվեցին Հայրենական պատերազմի և Արցախյան ազատամարտի վետերաններն ու մերօրյա մասնակիցները: Տոնական ու փառաբանման միջոցառումներ տեղի ունեցան Ստեփանավանում, Սպիտակում, Տաշիրում, Ալավերդիում, այլուր:

Մայիսյան հաղթանակների գլխավոր տոնահանդեսը մարզկենտրոնում էր: Առավոտյան Լոռու մարզպետարանի նախաձեռնությամբ և Վանաձորի քաղաքապետարանի գործուն մասնակցությամբ Շահումյան հրապարակից կազմակերպվեց «Մենք ուժեղ ենք միասին» նշանաբանով բազմամարդ երթ դեպի Երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակի հուշակոթող: Երթն ուղեկցվում էր ՀՀ ՊՆ 3-րդ բանակային կորպուսի փողային նվագախմբի կատարումներով: Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ երթին մասնակցում էին, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, մարզպետարանի, քաղաքապետարանի, քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցներ, երկրապահ կամավորներ, զինվորականներ, մտավորականներ, ուսանողներ ու դպրոցականներ, դպրոցականներ, հասարակայնության ներկայացուցիչներ: Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ, ուր առավոտից հնչում էր տոնական երաժշտություն, հավաքվել էր հոծ բազմություն: Հնչեց ՀՀ պետական օրհներգը: Ապա մեկ րոպե լռությամբ ներկաները հարգեցին Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան ազատագրական գոյամարտում և շփման գծում հերոսի մահով զոհված ազատամարտիկների և զինվորների հիշատակը:

Օրհնանքի և բարեմաղթանքի խոսք ասաց Գուգարաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը:

-Յուրաքանչյուրը, ով գիտի հաղթանակի արժեքը, կգնահատի և կարժևորի այս օրը: Ով չգիտի հաղթանակի տարողունակությունը, նա կպատվազրկի այդ արժեքը: Մեր հաղթանակները կոեցին մեր պապերը, և նրանց գործը շարունակեցին իրենցից հետո եկող տղաները և թոռները: Հաղթանակն անարժան մարդկանց ձեռքում մաշվում է և արժեզրկվում: Այս հաղթանակը մենք պարտքով վերցրել ենք մեր պապերից, որպեսզի փոխանցենք մեր հաջորդ սերունդներին: Հավերժ խոնարհում և փառք մեր զոհված ազատամարտիկներին, -ասաց նա:

Ապա ողջույնի խոսք ասաց Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը իսկ պատմական անդրադարձով հանդես եկավ Վանաձորի պետական համալսարանի դասախոս, «Արծվաշեն և որդիներ» հայրենակցական միության նախագահ Յուրա Ղուլյանը:

Իր ելույթում պատերազմի, զինված ուժերի և աշխատանքի վետերանների միության Վանաձորի խորհրդի նախագահ Գարուշ Խաչատրյանը խոսեց Հայրենական մեծ պատերազմի պատմական նշանակության մասին: Նա Հայաստանի 1200 վետերանների և իր անունից շնորհավորեց Հաղթանակի տոնի կապակցությամբ: Այնուհետև Վանաձորի քաղաքապետարանի կամերային երգչախումբը կատարեց «Հաղթանակի օր» և «Հայկական բանակ» երգերը:

-Մայիսյան հաղթանակները մեծ խորհուրդ ունեն և այդ խորհուրդը մեր միասնության մեջ է: Հենց այդ միաբանությունն էր, որ հնարավորություն տվեց նաև ապրիլյան չորսօրյա պատերազմում մեր զինվորների ու կամավորների հերոսական ջանքերով կասեցնել թշնամու դավադիր հարձակումն ու ևս մեկ անգամ հակառակորդին պարտադրեց զինադադար,- լրագրողների հետ զրույցում ասաց մարզպետ Արթուր Նալբանդյանը:

Միջոցառման վերջում ներկա պաշտոնյաները և բոլոր վանաձորցիները ծաղկեպսակներ և ծաղիկներ խոնարհեցին հուշակոթողին: